

ԳՐԻԳՈՐ ԶՈՇՐԱՊ

(1861-1915)



ՆՆՏԱԲՐՔԻՐ Ե ԻՍՍՆԱԼ

Գրիգորը ծնողների երկրորդ որդին էր՝ ուշիմ, խելացի ու բարի: Նա դեռ մանկությունից աչքի է ընկել գթառատությամբ և շռայլությամբ: Ահա ինչ է պատմում ընտանիքի մտերիմներից մեկը. «Կը պատահեր, որ իրեն հասակակից աղքատ փոքրիկներ եկեղեցվո դուռը կեցած մուրային, փոքրիկ Գրիգոր իր գրպանները ունեցածեն բաժին կը հաներ: Ոչինչ չունենալու պարագային (դեպքում) պատահած է, որ ան իր թաշկինակը տա:

Հազիվ 7-8 տարեկան՝ Գրիգորիկի առատաձեռնությունը այնքան հայտնի էր, որ Պեշիկթաշի հույն և թուրք աղքատ երեխաները որոշ ժամերու կ'սպասեին անոնց (նրանց) տան պատուհաններուն տակ՝ վստահ ըլլալով, որ փոքրիկ Գրիգորիկը վերեն իրենց գանազան նվերներ պիտի տեղացներ»:

Երեխայի այդ հատկանիշը հետագայում դառնում է նրա էության անբաժանելի մասը: Զոհրապն օգնել է շատերին, այդ թվում՝ այրիացած հորաքոջը, որը նրան համարում էր իր «ծերության ոսկե գավազանը»: Ինչպես վկայում է Զոհրապի ավագ դուստրը՝ Դոլորեսը, հայրը տարբերություն չի դրել իրեն դիմած մարդկանց միջև՝ լինեին նրանք հարազատ թե անծանոթ,

նախարար թե կարոտյալ հայրենակից, և հնարավորինս օգնել է: Իսկ Պոլսում շարունակ պտտվում էր հետևյալ խոսքը. «Գրիգոր Զոհրապին արցունքով մոտեցողը ժպիտով կը բաժնվի անկե (նրանից)»:

ԳՐԻԳՈՐ ԶՈՒՐԱՊԻ ՂԱՍԵՐԻՑ

Գրիգոր Զոհրապը շատ է սիրել գիրքը և բարձր է գնահատել լավ կրթությունը: Պատմում են, որ մի անգամ՝ Ամանորի նախօրյակին, վարժարաններից մեկի սաները նրանից ստանում են հայերեն ու ֆրանսերեն ընտիր գրքերով լեցուն մի արկղ՝ հետևյալ երկտողով. «Սիրելի՛ աշակերտներ, Նոր տարվան «անուշ-ապուրի» հետ մի՛ մոռնաք ձեր մտքին և հոգվույն ամենաքաղցր սնունդը՝ ընթերցումը»:

Բազմազբաղ Զոհրապը պահանջում էր, որ իր դուստրերն ամեն գիշեր *անպայման հայերենով* ներկայացնեն ընթերցած գրքերի բովանդակությունը: Նա Խաչատուր Աբովյանի պես առհասարակ շատ էր կարևորում մայրենի լեզվի նշանակությունը: «*Որքան լեզուներ գիտնար, սա աղեկ հասկցեք,* – ասում էր Զոհրապը, – *որ միայն մայրենի լեզուն է ձեր հոգիները իրարու կապողը: ... Եթե քու մայրենի լեզվովդ հոգիդ չի սնես, օտարի լեզվին մեջ ալ՝ ավելի անհոգի կը մնաս*»: Ժամանակակիցները Զոհրապին հիշում են որպես չափազանց հայրենասեր, բարի և անանձնական գործչի: Նա կարծում էր, որ «մարդս իր հոգվույն մեջ քույր ու եղբոր նման պիտի պահպանե *հայրենասիրության և մարդասիրության* սրբազան զգացմունքները»:

«ԶԱԲՈՒՂՈՆ» ՆՈՐԱՎԵՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Նորավեպի հերոսը գող է, բնակարանի գող: Հեղինակը թերևս պատահական չի ընտրել նրա անունը՝ *Զաբուղոն*, որի հին հրեերեն արմատը տառադարձությամբ անցել է հունարենին և նշանակում է *բնակարան*:

Տղան ունի իր նվիրական աշխարհը և ապրում է երջանիկ սիրո զգացմունքներով: Սիրում է Վասիլիկին: Թվում է՝ սերը փոխադարձ է:

Վասիլիկը մի օր, սակայն, ձանձրանում է խորհրդավոր հանդիպումներից, ցանկանում իր սերը հայտնի դարձնել ամենքին:

Արձակագիրը փոքր ծավալի մեջ հոգեբանորեն հիմնավորում է *տարօրինակ իրավիճակում հայտնված կնոջ դավաճանության* ակունքը:

Քաջածանոթ լինելով կանանց ներաշխարհին՝ նա Վասիլիկի դավաճանությո՜ւնը բխեցնում է նրա **ցուցամոլությունից**: Գրողը հեզնանքով նկատում է, որ կան կանայք, որոնք դերասանների նման «հանձ չեն կրնար առնել թափուր սրահի մը առջև ներկայացում տալ»:

Իսկ գո՞ղը: Նա դատապարտվում է յոթ տարվա ազատազրկման: Սերը վերագտնելու համար երեք տարի շարունակ փախչելու հուսահատ փորձեր է անում, որոնք ավարտվում են անհաջողությամբ: Վեցերորդը հաջողվում է. նա ի վերջո բանտի խոհանոցի ծխնելույզի միջով մի կերպ փախչում է և շտապում սիրած աղջկա տուն: Նրան թվում է՝ Վասիլիկն սպասում է իրեն: Բայց տեղի է ունենում անսպասելին: Պատուհանի հետևից խոսակցություն է լսում, անձայն ներս է մտնում և հասկանում, որ իր տեղն արդեն զբաղված է: Արյունը եռում է պատվասեր երիտասարդի երակներում, և նա ձեռքը տանում է դեպի գոտուն ամրացված դանակը: «Ո՞վ է այդ ապուշ էակը, որ իր թողած պակասը լեցնելու եկած է այստեղ»,– մտածում է Զաբուղոնը և հետո մի գնահատող հայացք նետելով հակառակորդի վրա՝ նրան շատ ցածր է համարում իրենից: Հետզհետե բարձրացող *արհամարհանքի առջև թուլանում է վրեժխնդրության զգացումը*, և մատները հեռանում են կիսով չափ դուրս քաշված դանակից: Բնակարանի «արվեստասեր» գողը հանկարծ հասկանում է, որ ինքը գող չէ, որովհետև ավելի լավ է լինել ինչքի գող, քան զգացմունքի: Եվ սերը կորցրած երիտասարդը «լուռ ցավերի» մեջ վերադառնում է բանտ: